ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 344 – Ա

11 սեպտեմբերի 2019 թ.

«ԳԵՂԱՄԱՍԱՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՌՈՍՏՈՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Ռոստոմյանին 2019 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում մասնագիտական վերապատրաստման դասընթացին:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2019 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ դնել «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Հասմիկ Ղազարյանի վրա:

3. Լուսինե Ռոստոմյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 4-ից:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

11.09.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 17.09.2019

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ